«Նոր ժամանակի կրթություն» Հ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հ.լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Անահիտ Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝Արարատի մարզի Շահումյանի Ա.Համբարձումյանի անվան միջն.դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՌԾՈՒՄ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը՝ Հայ ժողովրդի կենսական ուժը, իր լավագույն ձգտումները, խոհերն ու ձգտումները, մարմնավորված են էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի կերպարի մեջ: Դավիթը գերմարդկային ուժ ունեցող անխոցելի հսկա է՝ հայրենասեր, ժողովրդասեր, ռամիկի ու աշխատավորների պաշտպան, նա անձնուրաց քաջ է, մարդասեր, խաղաղասեր:

Հեքրաթները, որոնք ուսումնասիրվում են մայրենիի դասաժամերին , օգնում են երեխայի կյանքի շատ երևույթներ հասկանալու, ուսուցչի օժանդակությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, հերոսների գործողություններն և քայլերը վերլուծելու, գեղեցիկը տգեղից, չարը բարուց, ազնիվն ու անազնիվը տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու կարողությունների ձևավորմանը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակը փոխգործուն մեթոդների միջոցով Էպոսի ուսումնասիրումն է միջին դասարաններում: Դասաժամերին մեթոդների միջոցով էպոսի վերլուծության նոր կարողությունների ձևավորումն է, համագործակցելու կարողությունը, և ուսուցման մակարդակի բարձրացումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել տեսական համապատասխան գրականությունը
2. Հաշվի առնելով էպոսի ժանրային առանձնահատկությունները՝ ընտրել համապատասխան փոխգործուն մեթոդներ և մեթոդական հնարներ ու միջոցներ,
3. Ուսումնասիրել էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ժամանակ կիրառել ենք մի շարք մեթոդներ՝ թե' ավանդական, թե' փոխգործուն:

Հետազոտության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն նյութից, եզրակացություններից և գրականության ցանկից։

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գեղարվեստական գրականությունը արվեստի տեսակ է, որի միակ սկզբնանյութը բառերն ու բնական լեզվի կառույցներն են: Գեղարվեստական գրականության առանձնահատկությունները բացահայտվում են՝ համեմատելով այն մի կողմից արվեստի տեսակների հետ, որոնք չեն օգտագործվում որպես խոսքային-լեզվական նյութ կամ օգտագործվում են այլ միջոցների հետ զուգահեռ, մյուս կողմից՝ լեզվական տեքստի այլ տեսակների հետ՝ փիլիսոփայական, հրապարակախոսական, գիտական և այլն: Բացի դրանից, գեղարվեստական գրականությունը, ինչպես արվեստի մյուս տեսակները, միավորում է հեղինակային ստեղծագործություններ, ի տարբերություն սկզբունքայնորեն հեղինակ չունեցող ժողովրդագրական ստեղծագործությունների:

<<Գեղարվեստական երկը համարվում է գրականության հիմնական և կարևորագույն միավոր, որը դիտարկվում է ավելի ընդհանուր հասկացությունների հետ ունեցած կապերի մեջ: Դա գրողի ստեղծագործությունն է ամբողջությամբ վերցրած, որի մի առանձին օղակն է այս կամ այն կոնկրետ երկը: Դա ժամանակի գրականության ընդհանուր հոսանքն է, այն ժանրը, գրական ուղղությունը կամ դպրոցը, որոնց պատկանում է տվյալ ստեղծագործությունը>>[1]:

Ամեն մի ստեղծագործություն ունի իր թեման, որովհետև վերարտադրում է կյանքի ինչ-որ կողմեր: Գրողը երբեք չի կարող անտարբեր լինել իր պատկերած կյանքի նկատմամբ: Նա անպայման որոշ գաղափարական վերաբերմունք ունի, հաստատում կամ ժխտում է իրականության տվյալ կողմը: Պատկերվող երևույթներին հեղինակի տված գնահատականը նրա ըմբռնումները արտացոլվող իրականության մասին կոչվում է ստեղծագործության գաղափար (իդեա): Գաղափարը երկի մեջ առաջ քաշված հարցերին գրողի տված պատասխանն է: Երկի գաղափարը ոչ թե պետք է որոնել ինչ-որ էջում պատրաստի, տրամաբանորեն շարադրված, այլ՝ արտահայտված կենդանի պատկերներով: Երկի գաղափարական էությունը շատ ավելի հարուստ է, բազմակողմանի, քան կարելի է արտահայտել որևէ դատողության օգնությամբ:

[1]Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն էջ 164

Ստեղծագործության մեջ պետք է տարբերել, նախ, գլխավոր գաղափարը, որը նրա բոլոր պատկերների ընտրության ելակետն է և բխում է նրանց ամբողջությունից: Երկի գլխավոր գաղափարը հաճախ անվանում են նաև պաթոս. դա հեղինակի նվիրական միտքն է: Դրա կողքին երկի մեջ կարող են հանդես գալ նաև բազմաթիվ ուրիշ գաղափարներ, որոնք սերտորեն կապված են հիմնական գաղափարի հետ, ծառայում են նրա խորացմանն ու ամբողջացմանը: Ըստ Էդ. Ջրբաշյանի՝ Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմի հիմնական գաղափարը մարդկային առաքինությունների, ժողովրդի համար կատարված անձնազոհ գործի դրվատումն է: Բայց պոեմում արտահայտված են նաև հերոսության փառաբանման, սիրո ոգևորող և կործանող ուժի, մարդկային կյանքի անցողիկության, հայրենասիրության և դավաճանության հակադրության գաղափարները, որոնք ծառայում են հիմնական գաղափարի առավել լրիվ դրսևորմանը:

Ստեղծագործության գաղափարը չի նշանակում անպայման առաջադրվող կենսական պրոբլեմի լուծում: Գրողը կարող է միայն առաջադրել այս կամ այն հարցը՝ առանց տալու նրա վերջնական լուծումը: Սակայն կյանքի կարևոր հարցեր բարձրացնելը, նրա վրա հասարակության ուշադրության հրավիրելն ինքնին դառնում է որոշակի գաղափար, որն օգնում է ընթերցողին այս կամ այն եզրակացության հանգելուն[2]:

Գրական երկի բովանդակությունը կազմված է կյանքի որոշ կողմերի արտացոլումից (թեմա) և նրանց տրված հեղինակային գնահատականից (գաղափար): Թեման և գաղափարը գտնվում են սերտ միասնության մեջ: Թեմայի ընտրությունը միշտ պայմանավորված է հեղինակի գաղափարներով, իսկ ստեղծագործության գաղափարը զգալի չափով բխում է ընտրված թեմայից: Գրականագետ Է. Ջրբաշյանը վկայում է Մ. Գորկու տեսակետը թեմայի ու գաղափարի վերաբերյալ: <<Թեման գաղափար է, որը ծնվում է հեղինակի կենսափորձում, թելադրվում է նրան կյանքի կողմից, բայց տեղավորվում է նրա տպավորությունների շտեմարանում դեռևս չձևավորված և, պահանջելով մարմնավորում պատկերների մեջ, հեղինակի մոտ բուռն ցանկություն է առաջանում դեպի նրա ձևավորման աշխատանքը>>[3]:

---

[2]Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, երկրորդ՝ լրամշակված հրատարակություն, Երևան, 2009:

[3] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, երրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015:

Գրական ստեղծագործության բովանդակությունը իր գեղարվեստական իմաստն ստանում է միայն այն բանից հետո, երբ մարմնավորվում է համապատասխան պատկերների մեջ, վերածվում է մարդկային բնավորությունների, արարքների, զգացմունքների: Իր ստեղծագործության թեման և գաղափարը գրողը բացահայտում է՝ ստեղծելով համապատասխան պատկերների մի ամբողջ համակարգ՝ կերպարներ, նրանց կապերն ու գործողությունները, նրանց շրջապատող հանգամանքների և բնության նկարագրությունները և այլն:

Հայ ժողովրդի հյուսած բազմաթիվ հերոսական դյուցազներգությունների մեջ իր գեղարվեստական բարձր արժեքներով աչքի ընկած և ամենաբնորոշ գծերով օժտված էպոսը << Սասունցի Դավիթ>> էպոսն է: Այս էպոսի հերոսները ինչքան ել իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով և արարքներով կապված են բնության և նրա ուժերի հետ, խորապես մարդկային են: Սրանք կենդանի մարդիկ են օժտված արիությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ[4]:

Դավիթը, լինելով հայ ժողովրդի սիրելի հերոսը, ժողովրդի սիրելի հերոսը՝ ժողովրդի կողմից շնորհվել է նրան աստվածային տիտղոս՝ << Դավիթ>> կոչումով: Ժողովուրդը, սիրելով իր հերոսին, մանկությունից օժտել է ազատասիրական ոգով: Որպես հպատակության նշան՝ Մելիքը Դավթից պահանջում է անցնել թրի տակով: Բայց.

Դավիթ չգնաց, չ՛անցավ թրի տակ,

Կշտով անցավ

Ճկութ քսվավ ի ջադու քար՝

Քարեն կրակ ելավ:

Իբրև աշխատավոր ժողովրդի նախանձախնդիր, մեծ է նրա ցասումն ու ատելությունը ժողովրդի կեղեքիչների և նրա ազատության ու անկախության վրա բռնացողների դեմ:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ

[4]ԹորոսյանԿ., ԽաչատրյանՀ., ՍարգսյանՎ. Ա., ՉիբուխչյանԿ., Մայրենի 4, Երևան, 2013

արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի։ Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը։

Էպոսի չորս սերունդներն էլ ունեն թե՛ հերոսական, թե՛ մշակութային հերոսներին բնորոշ հատկանիշներ արտասովոր՝ ջրային ծնունդ, մանկական չարություններ, մշակութային գործունեություն, տարբեր սխրանքներ, բախում հոր հետ և ողբենգական վախճան։

Էպոսիլեզվիհարստություններնկազմումգունեղմակդիրները, որոնքլեզվիարտահայտչականությանկարևորգործոններիցեն։Ինչպեսհայտնիէ, մակդիրըոճականայնպիսիհնարանքէ, որիմիջոցովտրվումէառարկայի, երևույթիկամգործողությանոչթեհիմնականուբնորոշհատկանիշը, այլնրագեղագիտականբնութագրությունը՝զուգորդվածհեղինակիկամային-վերաբերականներբերանգներով։«Մակդիրըբառէ,–գրումէռուսլեզվաբանՌոզենտալը,–որըբնորոշումէառարկանկամգործողությունընևնրանցումընդգծումէինչ-որէականհատկություն, որակ։Մակդիրիոճականդերընրագեղարվեստականարտահայտչականություններ»[5]։Այլբն որոշմամբ՝մակդիրըառարկանկամերևույթըգեղագիտորենբնութագրողորոշիչէ, որիհիմքումընկածէփոխաբերականիմաստ[6]։

Թեպետմակդիրներըքերականականառումովհամընկնումենորոշիչներինպարագաներիհետ, սակայնգեղարվեստականարժեքուդերունեցողմակդիրներըառարկաներիուերևույթների, գործողությանտարբերակիչհատկանիշներարտահայտողսովորականորոշիչներիցուպարագաներիցտարբերվումենիրենցհիմնականհատկանիշով՝փոխաբերությամբ։Փոխաբերությունը, ինչպեսնշումէպրոֆ. Լ. Եզեկյանը,

[5] Д. Розенталь, Практическая стилистика русского языка, М., 1968, с. 399.
[6] Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գ. 2, Ե., 1991, էջ 44։

«մակդիրըկերտողմիակևհիմնականհատկանիշնէ»[7], որիմիջոցովէլտրվումէառարկայի, երևույթի, գործողությանպատկերավորնկարագրությունը:Ասելէթե՝որոշիչըմակդիրկարողէդառնալ միայնխոսքայինորոշակիմիջավայրում, միայնփոխաբերականնշանակությամբ:«Պարտադիրչէ,–գրումէՊ. Պողոսյանը,– որմակդիրըբացառապեսփոխաբերականլինի»[8]:Նմանմոտեցմամբմիշարքլեզվաբաններ առաջենքաշումփոխաբերականնոչփոխաբերականմակդիրներիդասակարգմանհարցը[9], որըմեզհամարընդունելիչէ:

Մակդիրը՝որպեսայլաբերությանտեսակ, յուրօրինակոճականհնարանքէբանաստեղծիգեղարվեստականմտածողությաննորմիտու մներնարտահայտելուհամար:Գունեղևինքնատիպմակդիրներըոչմիայնընդգծում, առանձնացնումենառարկայի, երևույթիայսկամայնհատկանիշը, այլևդառնումբանաստեղծիհուզականվերաբերմունքի, հոգեբանականարժևորմանգեղեցիկուբազմերանգարտացոլանք:

Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը, ջրի հրաշագործ էությունը, զգալի է ողջ էպոսում[10]:Վեպի պատմական հիմքով հնագույն ճյուղը առաջինն է՝ Սանասարի և եղբոր վիպաշարը, որը հիմնված է սրբազան երկվորյակների հնօրյա առասպելի վրա՝ վիպական դրվագների բազմապիսի հարակցումներով: Դա Սասնա դյուցազնական տան հիմնադրման վիպական պատմությունն է՝ իր երկվորյակ ներկայացուցիչներով: Սա իր վիպական բաղադրությամբ առհասարակ դասական սկզբնամաս է՝ բնորոշ բուն հերոսավեպերին:

ԷպոսիհերոսներիցՍանասարիևԲաղդասարիմասինհնագույնգրավորավանդությունը ընպահպանվելէԱստվածաշնչում (Թագավորացչորրորդ, ԺԹ), հետագայումՄովսեսԽորենացու (գիրքԱ, ԻԳ) ևԹովմաԱրծրունու (ԹովմաԱրծրունիևԱնանուն, «ՊատմությունԱրծրունյացտան») երկերում:

---

[7] Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, էջ 335:
[8] Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գ. 2, էջ 44:
[9] Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 151, Պ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 46:
[10]Ս. Հարությունյան, «Սասնածռեր»հերոսավեպիծիսաառասպելականմիքանիհատկանիշներիմասին, «Պատմա-բանասիրականհանդես»,Երևան, 2010, N 1, էջ 76-77:

«Անիծվածնժայռիմեջփակվածհերոսիարմատներըհասնումենխորինհնադար, իսկՍանասարուԲաղդասարիսյուժենկարարդենՀինԿտակարանում…: Բայցձևավորմանժամանակիհանգամանքըչիկարելիթերագնահել[11]»,- գրում է Ա. Եղիազարյանը:

Սանասար և Բաղդասար եղբայրները էպոսի առաջին ճյուղի գլխավոր կերպարներն են: Նրանք, ինչպես և էպոսի բազմաթիվ այլ կերպարներ իրենց գործողությունների մի մասով հանդես են գալիս իբրև միֆական կերպարներ, իսկ մյուս մասով՝ իբրև իրական և խորապես մարդկային կերպարներ: Առաջին դեպքում նրանք արտացոլում են հայ ժողովրդի առասպելական մտածողության հետքերը, իսկ երկրորդ դեպքում՝ բնության և հասարակական երևույթների նկատմամբ նույն ժողովրդի ցուցաբերած միանգամայն իրական վերաբերմունքը, այդ երևույթների խորապես ռեալիստական մեկնաբանությունը և կյանքի ճանաչողության ժողովրդական ըմբռնումը: Նրանց կերպարները ոչ թե հակադրվում կամ ժխտում են միմյանց, այլ լրացնում:

Սանասարն ու Բաղդասարը՝ իբրև առասպելական կերպարներ, մարմնավորում են բնության ամենահզոր տարերքներից երկուսը՝ ջուրը և կրակը: Էպոսի մյուս կերպարները նրանց տարբեր առիթներով կոչում են «ջրեղեն», «անձնահուր» մակդիրներով: Այդպես են անվանում իրենց նաև Սանասարն ու Բաղդասարը: Այդ կոչումներն ու անվանումները պատահական չեն, այլ հիմնված են էպոսում առկա կոնկրետ աշխարհայեցողության, ըստ որի՝ Սանասարն ու Բաղդասարը գոյացել են իրենց մոր՝ Ծովինարի խմած մի բուռ լիքը և մի բուռ կիսատ ջրից: Երկվորյակ եղբայրները կապված են ջրին, նրանք միաժամանակ անձրևաբեր են, հատկություն, որ սերտորեն առնչվում է նրանց «ջրեղենության» հետ և պայմանավորվում է վերջիններով: Պղնձե քաղաքում բանտարկված աղջկան վիշապից ազատելուց հետո ջուրը անձրևի պես լցվում է քաղաքը: Սանասարն առավոտյան իրեն հյուրընկալող ծերուկին պատմում է, թե գիշերը սև ամպ է եկել և «քաղաքը թրջել»[12].

Սանասար շատ **զորընդեղ** մարդ էր.

Սև սարի բոլոր ու չուրի Ծծմակաքիթ՝

---

[11]Ա. Եղիազարյան, «Սասնա ծռերի» պոետիկան, Երևան, 1999, էջ 3:
[12]Մ. Աբեղյան, Հայկականժողովրդականվեպը, Վաղարշապատ, 1908, էջ 169:

Մշու վերևով պարիսպ քաշած,

Էլած էր չուրի Սեղանսարու գոտին ի վեր... [13]

Կանչեց Սանասարին ասաց.

Ա՛յ **կանաչ** կտրիճ, էդ դո՞ր կերփթաս:

«Սասնա ծռեր» էպոսի հերոսները մեզ են երևում մի շարք գերբնական գծերով: Նրանք հաճախ բնորոշվում են ծուռ մակդիրով: Իրականում բացի մի քանի գլուխ կտրելուց,որը բնորոշ է երիտասարդներին,այն էլ իրենց շատ վաղ հասակում,նրանք բոլորովին չեն սխալվում անմիտ գործեր անելու:Հենց իրենց գերբնական ծննդյան օրից այս հերոսները մեծանում են մեկ օրում այնքան,որքան բոլոր երեխաները մեկ տարում: 3 կամ 4 տարեկանում նրանք այնքան զորեղ էին,որ նրանց մեկ ապտակը թռցնում է չապահասի գլուխը՝մարմնի մնացած մասը թողնելով տեղում:

Էսա մեր **ծուռ** Դավիթ ինչ ջանավար տեսե,

Բերե, լցրե մեջ գառներուն: /248/

Իր առաջին տարիներին Դավիթը, իջեցնում է մի կաղամախի,որպես ճոլորիկ,իր փոքրիկ ընկերների համար նման ֆիզիկական ուժի դրսևորման առաջ նրանք մոռանում են մանկան տարիքը և զարմանում են տեսնելով իջեցված ծառը, որը միանգամից վեր է բարձրանում և օդ շպրտում չարաճճի տղաների ողջ խումբը ցած գցելով ու սպանելով նրան: Սա իրականում ակնարկ է այն երեխաների դժվարին կացության համար, որոնք ֆիզիկապես աճում են շատ արագ՝ մնալով խելքով իրենց իրական տարիքում:Այս անհեթեթություններ արգելք չեն նրանց՝ լինելու ընտրյալ մարդիկ,որոնք անձնավորում են մարդկության բարոյականության կատարելատիպը: Դավիթը բնորոշվում է նաև **Սասունա ծուռ, շաղգամակեր** հատկանիշներով /291/:

Մեծ Միհրը բնորոշվում է **Առյուծաձև** մակդիրով.

Միհր առյուծ սպանեց,

Չուր հիմիկ Միհր էր,

Հիմիկվնե հետ էղավ **Առյուծաձև** Միհր: /178/

Նրանք, իրենց թևին կրում էին Խաչ պատերազմի դրոշմը կրոնակախարդական թալիսմանը,ըստ հավատի և բարի կախարդանքի պահանջում է,որ նրանց կհովանավորի

[13]Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1990, էջ 121:

բարոյական ճշտության և շիտակության դեպքում `այլապես կպատուհասի խստորեն:Նրանք խիզախ են մերժում են որևէ օգնություն,երբ գնում են կռվելու`լինի դա ընդդեմ առյուծի,վիշապների,դևերի կամ անհամար բանակի:Նրանց խիզախությունը միժամանակ մի կույր հանդգնություն չէ: Սասնա ծռերի հերոսները ունեն ասպետականություն հարձակվելուց առաջ Դավիթը զդուշացնում է թշնամու բանակին`պատրաստ լինելու կռվի: Որսի գնալիս նա խղճում և արձակում է նախապես բոլոր կենդանիներին,որ արգելապակված էինն իր հոր թագավորական որսասարում,որովհետև նա ասում է՝ չի կարելի սպանել բռնվածներին: Նա երբեք չի դավաճանում իր ուղղամտությանը`նույնիսկ խորամանկ ու նենգ թշնամու առաջ: Մելիքը Դավթին գցում է ծուղակ, ուր վերջինիս ընկնում է պարզամտորեն: Դավիթը վեհորեն է պատասխանում այս նենգությանը՝ Մելիքի մոր և քրոջ նկատմամբ ունցած երախտագիտությամբ հրաժարվելով իր երեք զակերից երկուսից՝ նունիսկ իմանալով մեկ այլ նենգության մասին որ Մելիքը թաքնվել էր փոսում`վրան քաշելով քառասուն ջաղացքար և քառասուն գոմշի կաշի: Տպավորիչ է նաև այն պահը երբ Դավթի դեմ է դուս գալիս և կանգնում մի ծերունի և ասում որ թե ինչու ես սպանումայն մարդկանց, որոնք չեն ուզում կռվել,և նրանց բերել են ստիպողաբար և Դավթին անմիջապես դադարեցնում է կոտորածը: Այս հերոսների իդեալը ազատությունն է՝ իրենց ու իրենց ժողովրդի ,բոլոր մարդկանց համար,և նրանց պայքարը նպատակ ունի նրանց հաստահարիչների լծից ազատելու:Նրանք երբեմն կատարում են օտար երկրներում միջամտելու և օտարներին անիրավություններից պաշտպանելու դերը: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենհամեստ արհեստների,բարեկամնում են խեղճերի հետ,կամովի ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին,նույնիսկ եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են:Նրանց համեստությունն այնքան մեծ է,որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջաբանում. «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»: Եթե պատահել է,որ նրանք հաղթվել են կնոջ հմայքից, ապա ամուսնությունից առաջ Միհերի մեկնման դեպքը բացատրվում է մի անհիմն երդման խոսքը պահելու մղումով: Սակայն նրանց թուլությունը սահմաններ է ճանաչում նույնիսկ լինելով գինովցած Դավիթը զայրացած մերժում է իր հորեղբոր օտարերկրացի կնոջ առաջարկը:

Վերջապես նրանք աստվածապաշտ են ,վանքեր ու եկեղեցիներ կառուցող: Այս հերոսները գերմարդիկ են ոչ միայն ֆիզիկական ուժի տեսակետից,բայց նաև իրենց բարոյական հատկանիշներով: Դժբախտությունն այն է, որ վերցնելով այդ տանը տրված բոլոր լավագույն գծերը,նրանք ոչինչ չեն թողել մյուսներին,բացի հորեղբայր Հովհանի հուժկու ձայնից: Մեր Սասնա ծռերի հերոսները ներկայացնում են համարյա նույն բնավորությամբ, կանայք շատ տարբեր են ,կախարդներ,պատերազմողները,և այլն,բայց նրանք,ովքեր ամուսնության հետևանքով դառնում են հայեր,կրում են իր արժեքը իմացող հայ կանանց հատուկ բոլոր իդեալական հատկությունները Քառասուն Ճյուղ-Ծամը, ստանձնելով խնամակալությունը, թագավորեցնում է իր որդի Մհերին: Բայց վերջինիս մահից հետո փակվում է սաստիկ սգի մեջ մինչև այն օրը,երբ տեսնում է իր թոռը Դավթին զենքերը ձեռքին իր ժողովրդին պաշտպանելիս,Արմաղանը նահա է պետական շահի համար մի երդմնազանցություն,որ արժենում է երկրագույն կյանքը և վտանգի է ենթարկվում նրա հավեժական կյանքը:Խանդութը հրաժարվում է ապրել Դավթից հետո,Փոքր Մհերի կինը,որը մեռնում է իր երկրում Մհերին սպասելով, որպես կտակ թողնում է մի նամակ՝ խնդրելով իրեն թաղել հայկական հողում[14]:

Խոսքիկառուցմանտարբերմիջոցներկան, բայցբառընտրությանդեպքումիրարփոխարինողներչկան: Փորձենքէպոսումգործածածմակդիրներիցորևէմեկըփոխարինելհոմանիշկամայլիմաստորևէբառով, նբանաստեղծականհյուսվածքնանմիջապեսկքանդվի:

Դավթի հայրենասիրությունը ցայտուն կերպով երևում է Մսրա Մելիքի դեմ կռվի գնալու պահին: Նա երբեք անարդար կռիվ չի մղում: Նա կարիք չի զգում թշնամուն ծաղրելու, քանի որ նրան ոչ թե փառքի համար է ուզում հաղթել, այլ ժողովրդի բարօրության:

Թեմայի ընտրությունը միշտ գաղափարական իմաստ ունի և չի կարող պատահականությամբ բացատրվել: Կենտրոնացնելով իր ուշադրությունը կյանքի որևէ

[14]Մ. Աբեղյան,Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին,Երևան, 1939:

կողմի վրա, հեղինակն արդեն դրանով ինչ-որ չափով արտահայտում է իր պատկերացումները իրականության մասին[15]:

Գրական ստեղծագործության բովանդակությունն իր գեղարվեստական իմաստն ստանում է միայն այն բանից հետո, երբ մարմնավորվում է համապատասխան պատկերների մեջ, վերածվում է մարդկային բնավորությունների, արարքների, զգացմունքների: Իր երկի թեման և գաղափարը գրողը բացահայտում է՝ ստեղծելով համապատասխան պատկերների մի ամբողջ համակարգ՝ կերպարներ, նրանց կապերի և գործողությունների, նրանց շրջապատող հանգամանքների և բնության նկարագրությունների և այլն: Հեղինակին գրավող թեման և գաղափարը հենց սկզբից հանդես են գալիս որոշակի պատկերների տեսքով:

Գրականությունը կյանքի հայելին է, այն գիտություն է գեղեցիկի մասին: Գեղարվեստական գրականությունը իրականության գեղեցիկ և օբյեկտիվ արտացոլումն է, որն օգնում է գեղագիտորեն ընկալել շրջապատող աշխարհը: Պայմանավորված հայ ժողովրդի պատմական ճակատագրով՝ հայ գրականությունն ունի իր զարգացման օրինաչափությունները, ինքնատիպ, յուրահատուկ գծերը, գաղափարական ու թեմատիկ առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր գիտություն ունի իր հետազոտության առարկան, իսկ յուրաքանչյուր առարկա՝ իր որոշակի մեթոդական առանձնահատկությունները: ‘Գրականության դասավանդման մեթոդիկայի’՝ որպես գիտության, հետազոտության առարկան կազմում է գրականության դպրոցական դասընթացի ուսուցման բնագավառը: Այն հենվում է մայրենի գրականության լիարժեք իմացության վրա: Առանց գրականության չի կարող լինել նրա ուսուցման մեթոդիկան[16]:

Վաղուց ի վեր հաստատված ճշմարտություն է, որ մարդու ընդունակությունների ու բնավորության ձևավորման ամենապատասխանատու շրջանը դպրոցական ուսումնառության ժամանակահատվածն է: Մայրենիի ուսուցիչը պետք է լինի

[15] Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1980:
[16] Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ուսուցում, Երևան, 1982, էջ 8:

բազմակողմանի զարգացած անձնավորություն, ապրի ոչ միայն դարերից իրեն ավանդված սրբություններով, այլ ստեղծագործական նախաձեռնումներով:

Գրականության ուսուցիչը պետք է լինի աշակերտների մեջ գեղեցկությունն արմատավորող հրաշալի սերմնացանը: Հարուստ գիտելիքներ ունենալը լավ ուսուցիչ լինելու կարևորագույն նախապայմաններից է: Գիտելիքները շարունակաբար պետք է հարստացնել ժամանակակից կրթության մակարդակի զարգացմանն ու հասարակության պահանջներին համեմատ: Իսկ գիտելիքները զարգանում են աննախադեպ արագությամբ:

20-րդ դարի կեսերին մարդկության կողմից ստեղծված գիտելիքները կրկնապատկվում էին ամեն վեց տարին մեկ: Սա նշանակում էր, որ վեց տարում մարդկությունը ստեղծում էր նույնքան գիտելիք, որքան կուտակել էր իր ձևավորման ժամանակից մինչև այդ պահը: Այս մեթոդիկան ուսուցչի աշխատանքի ուղեկիցն է դասաժամի բոլոր պահերին:

Տարրական, միջինևավագդպրոցներումլիովինտարբերենստեղծագործություններիուսուցմանբով անդակությունընևնրանիցբխողխնդիրները, սակայննրանքսերտորենկապվածենիրարհետ: Դաայնհաստատունուղինէ, որգրականությանմեջաշակերտինկտանիպարզիցդեպիբարդը, հեշտիցդեպիխրթինը:

Գեղարվեստականստեղծագործություններիդասավանդմանմեթոդիկանյուրացնելուևաշակերտներինհիմնովինկրթությունտալուհամարանհրաժեշտէլավպատկերացնելստեղծագործությանգեղագիտականնշանակությունը, ընկալելդրանորպեսգեղեցիկիմասինարվեստ, ճանաչելսեփականպատմությունունուգրականությունը, ազգայինարժեքները, դաստիարակվածլինելազգայինհպարտությանհոգեբանությամբ:

Գեղարվեստականստեղծագործությունարտացոլումէիրականությունը, մարդկանցկենսաձևնուհոգեկերտվածքը, պատկերումբնությանտեսարանները: Նրահամարնյութէծառայումկյանքնիրողջբազմազանությամբ: Մարապատումներիուսուցմանընթացքումուսուցիչըաշակերտներիմեջպետքէդաստի

արակիմարդկայինվեհգաղափարներ, ազնիվզգացումներ, լավագույնհատկություններ, սերևհետաքրքրությունառաջացնիմայրենիինկատմամբ, յուրացնելգրականերկերիլեզունուռճը, հարստացնինրանցբառապաշարը, պատկերացումներնուտեղեկություններըկյանքիվերաբերյալ, զարգացնիբանավորևգրավորխոսքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ մարդուհոգեկանաշխարհըպետքէլինիզգացմունքայինևհուզառատ, բարությունտարածիշուրջը, դառնագեղեցիկսերմնացան: Իսկայդպիսիմարդուդաստիարակությանհիմքըդրվումէկրտսերդպրոցում: Եվհեքիաթըայնգեղարվեստականստեղծագործություններիցէ, որիմիջոցովտարրականդպրոցիերեխանհնարավորությունէստանումճիշտընկալելշրջակ աաշխարհը, վերլուծություններուդատողություններկատարել, նորըօժանդակումէերեխայիանձիձևավորմաննուդաստիարակմանը:

Փոխգործունմեթոդներովհեքիաթիուսումնասիրումը, մանկավարժականպրակտիկայիընթացքումկատարածհետազոտություններիարդյունքն երըհնարավորությունենտալիսկատարելուհետևյալեզրակացությունները.

- Ուսումնասիրելովտեսականհամապատասխանգրականությունըկարողացանք ընտրելփոխգործունմեթոդներ, որոնցիցմեկըշարունակումևլրացնումէրմյուսին, ընտրեցինքհամապատասխանթեմանևկատարեցինքհետազոտությունը:
- Ընտրվածփոխգործունմեթոդներիմիջոցովհեքիաթիուսումնասիրումընպաստու մէհեքիաթիթեմատիկ-գաղափարականհիմքըառավելհիմնավորըմբռնելուն՝ մեծացնելովհեքիաթիդաստիարակչական, ուսուցողական, ճանաչողականնշանակությունը:
- Փոխգործունմեթոդներովհեքիաթիուսումնասիրումըմեծապեսխթանումէև' աշակերտներիկապակցվածխոսքիզարգացմանը, և' միջանձնայինհարաբերություններիձևավորմանը, և' արժեհամակարգիզարգացմանը, և' ակտիվմասնակցությանը, և' հիմնականգաղափարիճիշտվերարտադրմանը:
- Փոխգործունմեթոդներովհեքիաթիուսուցմանարդյունքումաշակերտներըկարող ացանպատկերացումկազմելևարժևորելմարդկայինկարևորագույնհատկանիշն երը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայկականժողովրդականվեպը, Վաղարշապատ, 1908:
2. Աբեղյան Մ., Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին,Երևան, 1939:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն. ուսում. ձեռնարկ, Երևան, 2003:
4. Եղիազարյան Ա., «Սասնա ծռերի» պոետիկան, Երևան, 1999:
5. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989:
6. Հարությունյան Ս.,«Սասնաձռեր»հերոսավեպիծիսաառասպելականմիքանիհատկանիշներիմասի ն, «Պատմա-բանասիրականհանդես»,Երևան, 2010, N 1, էջ 76-77:
7. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ (Խոսքի տեսություն), գ. 2, Երևան, 1991:
8. Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1990:
9. Розенталь Д., Практическаястилистикарусскогоязыка, М., 1968.